

Մայշոմ հարթակի պայմաններ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 21.01.2022թ. թիվ 02/11/22 որոշմամբ, սույն խմբագրությունը՝ Տնօրինության 03.08.2026թ. թիվ 03/118/26 որոշմամբ և «Դիննո» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի 30.07.2026թ-ի որոշմամբ և ուժի մեջ է 14.08.2026թ-ից:

1. Սահմանումներ

Ստորև նշված հասկացությունները **Պայմաններում** ունեն հետևյալ իմաստը, եթե այլ բան սահմանված չէ **Պայմանների** որևէ դրույթում:

- 1.1. **Բանկ**՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, որի տվյալներն են՝ (ա) ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի գրանցման համարը՝ 50, ամսաթիվը՝ 08.09.1992թ., (բ) գրանցման վկայականի համարը՝ 0154, (գ) իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 2; (դ) պաշտոնական ինտերնետային կայքէջի հասցե՝ www.ameriabank.am; (ե) էլփոստի հասցե՝ info@ameriabank.am; (զ) հեռախոս՝ +374 10 561111, +374 12 561111:
- 1.2. **Ընկերություն**՝ «Դիննո» ՓԲԸ, որը **Հարթակի** միջոցով մատուցում է **Ծառայություններ**:
- 1.3. **Հաճախորդ**՝ **Հարթակի** օգտատերը:
- 1.4. **Օգտատեր**՝ **Հարթակում** անձնական էջ ունեցող ֆիզիկական անձ:
- 1.5. **Մայշոմ հարթակ (նաև՝ Հարթակ)**՝ անշարժ գույքի հետ կապված ծառայություններից օգտվելու համար նախատեսված ինտերնետային գնարկիչի (բրաուզերի) միջոցով աշխատող հեռավար սպասարկման համակարգ (<https://myhome.am/hy>):
- 1.6. **Ծառայություններ**՝ **Հարթակի** միջոցով **Ընկերության** և/կամ **Բանկի** կողմից **Հաճախորդին** մատուցվող ծառայություններ:
- 1.7. **Կողմեր**՝ **Բանկը**, **Ընկերությունը** և **Հաճախորդը**:
- 1.8. **Երրորդ կողմ**՝ ցանկացած անձ, որը **Ընկերությունը** չէ, **Բանկը** չէ, և **Հաճախորդը** չէ:
- 1.9. **Պայմաններ**՝ սույն՝ Մայշոմ հարթակի պայմանները:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1. **Պայմաններով Ընկերությունը** և/կամ **Բանկը Հաճախորդին** ներկայացնում են **Ծառայություններից** օգտվելու պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքելու հրապարակային առաջարկ:
- 2.2. **Պայմանագիրն** ուժի մեջ է մտնում **Հաճախորդի** կողմից **Պայմանները** ակցեպտավորելու (ընդունելու) պահից և գործում է **Օգտատեր** լինելու ամբողջ ժամանակահատվածում: Ընդ որում, **Պայմանները** և դրա մասերը **Կողմերի** վրա տարածվում են այնքանով, որքանով **Կողմերի** միջև առկա են վերաբերելի իրավահարաբերություններ:
- 2.3. **Հարթակը** օգտագործելով և/կամ **Ծառայություններից** օգտվելով՝ **Հաճախորդը** հաստատում է, որ ծանոթացել է և ընդունում է **Պայմանները**:
- 2.4. **Պայմանները** կարող են ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխվել **Ընկերության** և/կամ **Բանկի** նախաձեռնությամբ՝ առանց **Հաճախորդի** լրացուցիչ համաձայնության: **Պայմանների** նոր խմբագրությունը հրապարակվում է **Հարթակում**, և/կամ **Ընկերության** և/կամ **Բանկի** կողմից սահմանված այլ եղանակով ծանուցելով **Հաճախորդին**, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ և/կամ տվյալ փաստաթղթով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում **Ընկերությունը** և/կամ **Բանկը** փոփոխությունների ու լրացումների մասին **Հաճախորդին** ուղարկում է ծանուցում՝ ՀՀ օրենսդրության համաձայն: **Պայմանների** նոր խմբագրությունը ուժի մեջ է մտնում **Ընկերության** և/կամ **Բանկի** կողմից սահմանված ժամկետում:

- 2.5. **Հաճախորդը** կարող է դադարեցնել **Հարթակի** օգտագործումը և/կամ չօգտվել **Ծառայություններից**, եթե համաձայն չէ **Պայմանների** փոփոխություններին:
- 2.6. **Բանկի, Ընկերության** և/կամ **Բանկի** հետ համագործակցող **Երրորդ կողմի** կողմից **Հարթակում** տեղադրված ցանկացած ապրանքային նշան, ֆիրմային անվանում, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքի այլ օբյեկտներ պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ:

3. Օգտատիրոջ գրանցում և սպասարկում

- 3.1. **Հարթակում** սահմանված **Ծառայություններից** օգտվելու համար **Հաճախորդը** պետք է գրանցի **Օգտատեր**, իսկ առանձին **Ծառայություններից** օգտվելու համար՝ նաև անցնի **Հարթակում** սահմանված կարգով նույնականացում: **Հարթակի** որոշ հնարավորություններ և **Ծառայություններ** կարող են հասանելի լինել նաև **Հարթակի** այցելուներին:
- 3.2. **Հաճախորդը Հարթակում** օգտատեր գրանցել կարող է.
 - 3.2.1. **Հարթակ** այցելելու միջոցով, որի դեպքում անհրաժեշտ է լրացնել **Հարթակի** կողմից պահանջվող անձնական և կոնտակտային տվյալները և սահմանել **Բանկի** կողմից սահմանված անվտանգության նվազագույն պայմաններին բավարարող գաղտնաբառ:
 - 3.2.2. **Բանկի** «ՄայԱմերիա» հեռավար սպասարկման համակարգ մուտք գործելու և դրա համապատասխան բաժնից **Հարթակ** այցելելու միջոցով, որի դեպքում **Օգտատերը** ստեղծվում է ինքնաշխատ կերպով՝ օգտագործելով **Բանկում** գրանցված **Հաճախորդի** անձնական և կոնտակտային տվյալները, իսկ գաղտնաբառը պետք է սահմանի **Հաճախորդը**՝ հետևելով իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրությամբ սահմանված քայլերին:
- 3.3. **Հարթակում** կատարվող գործողությունների համար **Հաճախորդի** հետ որպես հաղորդակցման միջոց հիմք են ընդունվում **Հաճախորդի** էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը: Միայն կամ այլ անձի պատկանող հաղորդակցման վերոնշյալ տվյալները մուտքագրելու կամ դրանցից որևէ մեկը հիմք ընդունելու արդյունքում **Հաճախորդի** վերաբերյալ կամ **Հաճախորդին** ուղղված տեղեկությունը կարող է հասանելի դառնալ այլ անձանց, ինչի համար **Ընկերությունը** և **Բանկը** որևէ պատասխանատվություն չեն կրում:
- 3.4. **Հաճախորդը** իր **Օգտատիրոջ** էջ կարող է մուտք գործել.
 - 3.4.1. **Հարթակ** այցելելու միջոցով, որի դեպքում անհրաժեշտ է լրացնել **Հարթակի** մուտքանունն ու գաղտնաբառը:
 - 3.4.2. **Բանկի** «ՄայԱմերիա» հեռավար սպասարկման համակարգ մուտք գործելու և դրա համապատասխան բաժնից **Հարթակում Հաճախորդի Օգտատիրոջ** էջ ինքնաշխատ կերպով մուտք գործելու միջոցով:
- 3.5. Գաղտնաբառը մոռանալու կամ փոխելու անհրաժեշտության դեպքում **Օգտատիրոջ** կողմից **Հարթակում** համապատասխան հրահանգի տրամադրումից հետո անհրաժեշտ է հետևել էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրության մեջ նշված գործողություններին:
- 3.6. **Հարթակում Հաճախորդը** կարող է բարձրացնել իր **Օգտատիրոջ** նույնականացման աստիճանը՝ անցնելով ամբողջական նույնականացում, որի համար **Հաճախորդը** պետք է տրամադրի **Հարթակի** կողմից պահանջվող անհրաժեշտ անձնական և կոնտակտային տվյալները և անցնի **Հարթակի** կողմից նույնականացման համար սահմանված հաջորդական քայլերով: **Հարթակով Ծառայություններից** օգտվելու շրջանակներում կարող է իրականացվել տվյալ **Ծառայության** տրամադրման համար նախատեսված հավելյալ նույնականացում:
- 3.7. **Օգտատեր** գրանցելու, ինչպես նաև **Ծառայություններից** օգտվելու համար **Հաճախորդի** կոնտակտային տվյալ(ներ)ը կարող են հավաստագրվել՝ **Հաճախորդի** կողմից այդ կոնտակտային տվյալների

օգտագործման փաստը հաստատելու համար: **Հարթակում** կարող է սահմանվել հավաստագրված կոնտակտային տվյալի վավերականության ժամկետ, որը լրանալու դեպքում **Հաճախորդը** ստանում է համապատասխան ծանուցում **Հարթակի** իր **Օգտատիրոջ** էջում՝ այդ կոնտակտային տվյալի վերահավաստագրման անհրաժեշտության մասին:

- 3.8. **Օգտատիրոջ** գրանցումը, նույնականացումը և **Հարթակի** բնականոն գործունեությունն ապահովող տեխնիկաձրագրային լուծումների/կարգաբերումների տրամադրումը և/կամ տեխնիկական սպասարկումը/ուղղումների իրականացումը ապահովվում է **Բանկի** կողմից: **Հաճախորդը** համաձայն է, որ **Հարթակի** միջոցով **Ընկերության** կողմից մատուցվող **Ծառայություններից** օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով **Բանկը** փոխանցի **Հաճախորդի** անձնական և կոնտակտային տվյալները **Ընկերությանը**: Ընդ որում, տվյալների փոխանցումը կատարվում է բացառապես այն ծավալով, որն անհրաժեշտ է վերոնշյալ նպատակի համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: **Ընկերությանը** ոչ մի դեպքում հասանելի չէ **Հաճախորդի** բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը:

4. Ծառայություններ

- 4.1. **Հարթակում Ընկերության** կողմից մատուցվում են հետևյալ **Ծառայությունները**.
- 4.1.1. Անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության հանձնելու հետ կապված ծառայություններ.
- 4.1.1.1. Անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության հանձնելու հայտարարության հրապարակման հայտի ներկայացում,
- 4.1.1.2. **Հաճախորդի** կողմից հրապարակված հայտարարության հետ կապված այլ անձանցից հարցումների ստացում:
- 4.1.2. Անշարժ գույքի ձեռքբերման և/կամ վարձակալության հետ կապված ծառայություններ.
- 4.1.2.1. Վաճառվող և/կամ վարձակալության հանձնվող անշարժ գույքի հայտարարությունների դիտում,
- 4.1.2.2. Հայտարարության պահպանում, տվյալ անշարժ գույքի հասանելիության վերաբերյալ ծանուցման ստացում,
- 4.1.2.3. Հայտարարության ամրագրում, այլ անձի կողմից ապամրագրման մասին ծանուցման ստացում,
- 4.1.2.4. **Հաճախորդի** նախընտրություններին համապատասխան հայտարարությունների որոնում,
- 4.1.2.5. Հայտարարության հետ կապված հարցման ուղարկում:
- 4.1.3. Այլ ծառայություններ.
- 4.1.3.1. Ծառայությունների մատուցման, ապրանքների վաճառքի կամ աշխատանքների կատարման հայտարարությունների դիտում,
- 4.1.3.2. **Հարթակում** ծառայությունների մատուցմամբ, ապրանքների վաճառքով կամ աշխատանքների կատարմամբ զբաղվող կազմակերպություններից/անհատ ձեռնարկատերերից գնումներ կատարելու համար պրոմոկոդի տրամադրում,
- 4.1.3.3. **Հարթակում** ներկայացված կազմակերպությունների վերաբերյալ կարծիքի ներկայացում գնահատականի տեսքով:
- 4.2. **Հաճախորդը** համաձայն է, որ իր կողմից **Հարթակում** անշարժ գույք ամրագրվելու դեպքում **Ընկերությանը** իրավունք ունի տվյալ անշարժ գույքը վաճառող՝ **Ընկերության** հետ համագործակցող կառուցապատողին կամ անշարժ գույքի գործակալին տրամադրել տեղեկատվություն **Հաճախորդի** վերաբերյալ՝ այդ կազմակերպության կողմից տվյալ անշարժ գույքի առուվաճառքի գործարքի հետագա գործողությունները պլանավորելու նպատակով:

- 4.3. **Հաճախորդը** համաձայն է, որ իր կողմից **Հարթակում** անշարժ գույքի վաճառքի/վարձակալության հայտարարության պահպանման դեպքում այդ մասին ծանուցվում են **Ընկերությունը** և հայտարարությունը հրապարակած անձը:
- 4.4. **Բանկը** որևէ կերպ չի մասնակցում **Ընկերության** կողմից **Հարթակի** միջոցով **Ծառայությունների** մատուցման գործընթացին և պատասխանատու չէ այդ **Ծառայությունների** տրամադրումից բխող որևէ հետևանքի համար:
- 4.5. **Հարթակի միջոցով Բանկի կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները.**
- 4.5.1. Վարկային ծառայություններ.
- 4.5.1.1. Վարկունակության գնահատում,
- 4.5.1.2. Անշարժ գույքի ձեռքբերման վարկային հայտի ներկայացում և վարկի ստացում՝ ներառյալ հեռավար նույնականացում, վարկային պայմանագրի, այդ թվում՝ վարկային փաթեթի՝ այլ փաստաթղթերի ստորագրում և այլն¹:
- 4.5.1.3. Անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և կառուցապատման վարկերի վերաֆինանսավորում՝ ներառյալ հեռավար նույնականացում, վարկային պայմանագրի, այդ թվում՝ վարկային փաթեթի՝ այլ փաստաթղթերի, ստորագրում և այլն:
- 4.5.2. Ծառայություններ նույնականացված օգտատերերի համար.
- 4.5.2.1. **Օգտատիրոջ** էջում ինքնաշխատ կերպով արտացոլված **Հաճախորդի** անշարժ գույք/եր/ի՝ ներառյալ այդ գույք/եր/ի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության դիտում, **Բանկում Հաճախորդի** գործող հիփոթեքային վարկ/եր/ի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության դիտում և այլն:
- 4.6. **Բանկի** կողմից սահմանված դեպքերում **Հարթակի** միջոցով վարկ ստանալու համար կարող է պահանջվել նույնականացում և/կամ վարկային պայմանագրերի ստորագրում **Բանկի** տարածքում:
- 4.7. **Հաճախորդը** համաձայն է, որ իր կողմից **Հարթակում** անշարժ գույքի ձեռքբերման վարկային հայտ ներկայացվելու դեպքում **Բանկն** իրավունք ունի տվյալ անշարժ գույքը վաճառող՝ **Բանկի** հետ համագործակցող կառուցապատող կամ գործակալական կազմակերպությանը տրամադրել տեղեկատվություն **Հաճախորդի** և վերջինիս վարկային հայտի կարգավիճակի վերաբերյալ՝ այդ կազմակերպության կողմից տվյալ անշարժ գույքի առուվաճառքի գործարքի հետագա գործողությունները պլանավորելու նպատակով:
- 4.8. Մույն բաժնում ներկայացված **Ծառայությունների** համար կարող են սահմանել սակագներ, որոնք **Հաճախորդին** ներկայացվում են **Հարթակում**: Օգտվելով **Ծառայություններից Հաճախորդը** հաստատում է, որ ծանոթացել է և ընդունում է դրանց տրամադրման համար սահմանված սակագները:

5. Անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության հայտարարությունների հրապարակման պայմաններ

- 5.1. Անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության հանձնելու հայտարարություն հրապարակելիս **Հաճախորդը** պարտավորվում է.
- 5.1.1. տրամադրել միայն **Հարթակի** պահանջներին բավարարող անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն:
- 5.1.2. տեղադրել անշարժ գույքի բարձրորակ նկարներ, որոնք արժանահավատորեն կարտացոլեն անշարժ գույքի արդի և իրական վիճակը:

¹ Մույն ծառայությունը հասանելի է, եթե **Հաճախորդը** ձեռք է բերում **Բանկի** հետ համագործակցող կառուցապատողի կամ անշարժ գույքի գործակալի հայտարարության մեջ նշված անշարժ գույքը:

- 5.1.3. մուտքագրել ճշգրիտ և անշարժ գույքին առնչվող փաստաթղթերին համապատասխան տվյալներ:
- 5.1.4. հրապարակել բացառապես իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ հայտարարությունները:
- 5.1.5. հայտարարություն հրապարակելուց առաջ, գույքն ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսանալու դեպքում, ստանալ բոլոր համասեփականատերերի օրենքով սահմանված համաձայնությունը անշարժ գույքը վաճառելու/վարձակալության հանձնելու վերաբերյալ: Ընդ որում, համաձայնության բացակայության դեպքում ամբողջ պատասխանատվությունը կրում է **Հաճախորդը**:
- 5.1.6. հրապարակել **Երրորդ կողմերի** իրավունքներից, պահանջներից և որևէ այլ ծանրաբեռնվածությունից/սահմանափակումից ազատ անշարժ գույքերի վերաբերյալ հայտարարություններ:
- 5.1.7. անհապաղ հեռացնել վաճառված/վարձակալված և/կամ ժամանակի տվյալ պահին ոչ ակտուալ հայտարարությունները:
- 5.1.8. օպերատիվորեն և սպառիչ արձագանքել իր հայտարարության վերաբերյալ այլ անձանց բոլոր հարցադրումներին, կազմակերպել անշարժ գույքի ցուցադրումը, տրամադրել անշարժ գույքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունն ու իրավական հիմքերը և այլն:
- 5.1.9. չհրապարակել և **Երրորդ կողմերին** չտրամադրել իր անշարժ գույքի գնորդի/վարձակալի կամ իր հայտարարության վերաբերյալ հարցում ուղարկված անձի վերաբերյալ որևէ տեղեկատվություն (ներառյալ անձնական տվյալ, բանկային և/կամ առևտրային գաղտնիք)՝ առանց տվյալ անձի գրավոր համաձայնության:
- 5.1.10. **Ընկերության** պահանջով **Ընկերությանը** տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայականի և այլ իրավական հիմքերի բարձրորակ նկարները:
- 5.2. **Ընկերության** կողմից ծանուցում ստանալուց հետո՝ դրանում նշված ժամկետում, հրապարակված հայտարարությունը **Հաճախորդի** կողմից չթարմացվելու դեպքում, **Ընկերությունն** իրավունք ունի հեռացնել այդ հայտարարությունը **Հարթակից**:
- 5.3. Անշարժ գույքի վաճառքի/վարձակալության հանձնելու գործարքի յուրաքանչյուր մասնակից պարտավորվում է ինքնուրույն պարզել մյուս մասնակցի ինքնությունը, հավաստիանալ տվյալ մասնակցի՝ գործարքի պատշաճ կողմ հանդիսանալու և տվյալ գործարքը կնքելու բոլոր անհրաժեշտ իրավունքներով օժտված լինելու հարցում, ինչպես նաև պարզել հրապարակված բոլոր տվյալների իսկությունը: **Ընկերությունը** որևէ պատասխանատվություն չի կրում գործարքի մասնակիցների ինքնությունը պարզելու, հայտարարության մեջ ներառված տեղեկատվության հավաստիության և արժանահավատության համար:
- 5.4. **Ընկերությունն** իրավունք ունի ցանկացած ժամանակ սեփական հայեցողությամբ, այդ թվում՝ **Հաճախորդի** կողմից սույն գլխով ստանձնած պարտավորությունների խախտման կամ զեղծարարությունների կամ դրանց վերաբերյալ կասկածների կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում **Հարթակից** հեռացնել **Հաճախորդի** կողմից հրապարակված ցանկացած հայտարարություն՝ **Հաճախորդին** այդ մասին նախապես ծանուցելով:
- 5.5. **Ընկերությունը** պարտավորություն չի կրում **Հաճախորդի** կողմից հրապարակված հայտարարության մեջ նշված անշարժ գույքի վաճառքի և/կամ վարձակալության հանձնելու շրջանակներում **Հաճախորդի** նկատմամբ **Երրորդ կողմերի** ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և դրա հետևանքով միմյանց պատճառված վնասի համար:
- 5.6. **Ընկերությունը** պարտավորություն չի կրում **Հարթակի** տեխնիկական խափանումների հետևանքով **Հաճախորդի** և/կամ **Հաճախորդի** անշարժ գույքի գնորդի/վարձակալի կրած վնասի համար:

6. Կողմերի պատասխանատվությունը

- 6.1. **Հաճախորդը** պատասխանատու է իր կողմից **Հարթակում** ներկայացված հայտի, տեղեկատվության և այլ փաստաթղթերի ճշտության, օրինականության, իսկության, արժանահավատության, ամբողջականության և պատշաճ լինելու համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.2. **Հաճախորդը** պարտավոր է ապահովել **Հարթակից** օգտվելու իր սարքերի, ծրագրային ապահովման միջոցների, իր **Օգտատիրոջ** էջ մուտք գործելու մուտքային, նույնականացման տվյալների անվտանգ պահպանումը, չտրամադրել և հայտնի չդարձնել դրանք **Երրորդ կողմի**: Նշված միջոցների կորստի, **Երրորդ կողմի** հայտնի դառնալու հետևանքով **Հաճախորդի, Ընկերության, Բանկի** և/կամ **Երրորդ կողմի** կրած վնասների և կորուստների համար պատասխանատվությունը կրում է **Հաճախորդը**՝ անկախ նրանից, թե **Ընկերությունը** կամ **Բանկը** կարող էր տեղյակ լինել նման կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
- 6.3. **Ընկերությունը** կամ **Բանկը** իրավունք ունի միակողմանիորեն կասեցնել **Հարթակի** օգտագործման հնարավորությունը **Հաճախորդի** համար, եթե ունի կասկածներ դրա անօրինական օգտագործման, անվտանգության պահանջների խախտման, գեղծարարության վտանգի առկայության վերաբերյալ:
- 6.4. **Հարթակի** բարելավման, տեխնիկական վերազինման, **Հարթակի** նոր, արդիականացված տարբերակի (վերսիայի) անցման, փոխարինման, ինչպես նաև **Բանկի** կամ **Ընկերության** հայեցողությամբ այլ դեպքերում **Ընկերությունը** կամ **Բանկը** կարող է միակողմանի կասեցնել, դադարեցնել **Հարթակի** օգտագործումը կամ դրանով որևէ ծառայության տրամադրումը՝ ծանուցելով այդ մասին **Հաճախորդին** անձամբ և/կամ հրապարակելով այդ մասին **Բանկի** ինտերնետային կայքէջում կամ **Հարթակում**:
- 6.5. **Հաճախորդի** կողմից **Հարթակով** ներկայացված հայտերը կարող են չկատարվել կամ դրանց կատարումը կարող է կասեցվել, եթե վավերականությունը և/կամ օրինականությունն ակնհայտ չէ, կամ կարող են կիրառվել **Հաճախորդի Օգտատիրոջ** օգտագործման այլ սահմանափակումներ:
- 6.6. **Հարթակով** սպասարկման համար անհրաժեշտ անհատական համակարգչային և հեռահաղորդակցության սարքերի, այդ սարքերում ինտերնետային կապի, **Երրորդ կողմից** հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերման և վճարման պատասխանատվությունն ու ծախսերը կրում է **Հաճախորդը**:
- 6.7. **Հարթակում Հաճախորդի** համաձայնություն կամ հաստատում նշանակող բովանդակությամբ դաշտերում (հատվածներում) **Հաճախորդի** կողմից նշագրում կատարելը, կոճակ սեղմելը, **Ծառայությունից** օգտվելու կամ համապատասխան նշանակությամբ կոնկրետ գործողություն կատարելը նշանակում է տվյալ հայտի կամ համապատասխան պայմանի/դրույթի վավերացում **Հաճախորդի** կողմից և փաստում է, որ **Հաճախորդը** ծանոթացել է և համաձայն է դրանց հետ:
- 6.8. **Հաճախորդի** կողմից **Հարթակում** իր **Օգտատիրոջ** էջով որևէ հայտ ներկայացվելու դեպքում համարվում է, որ այդ հայտը պատշաճ վավերացված է, նախաձեռնվել է և ներկայացվել **Հաճախորդի** կողմից՝ սթափ մտքով, առանց մոլորության և հարկադրանքի ազդեցության, իր ազատ կամահայտնությամբ և իր իրական մտադրություններին համապատասխան: Նման հայտը հիմք է դրան ընթացք տալու **Հաճախորդին** Ծառայություն տրամադրելու համար:
- 6.9. **Հաճախորդը** պարտավորվում է **Հարթակից** օգտվել միայն օրինական նպատակներով և որևէ կերպ չխախտել **Բանկի, Ընկերության** կամ **Երրորդ կողմի** իրավունքները:
- 6.10. **Հաճախորդը** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում **Երրորդ կողմի** տվյալներ **Հարթակ** մուտքագրելու, կեղծ տեղեկատվություն տարածելու, **Երրորդ կողմի** անձնական տվյալների մշակման համաձայնություն տրամադրելու համար:
- 6.11. **Բանկը** և **Ընկերությունը** պատասխանատվություն չեն կրում **Հարթակում** տեղադրվող, ներբեռնվող և այլ կերպ **Հարթակում** հասանելի դարձվող տեղեկատվության, ինչպես նաև այլ անձանց ինտերնետային կայքերի վերաբերյալ տվյալների և բովանդակության հավաստիության, արդիականության և օրենսդրական

համապատասխանության համար, այնտեղ տեղադրված գովազդների և/կամ նման տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար:

- 6.12. **Հաճախորդը Օտաայություն/ներ/ի** մատուցման շրջանակներում պարտավոր է ունենալ անհրաժեշտ լիազորություն ինքնուրույն տնօրինել իրեն պատկանող գույք/եր/ը ամբողջությամբ, իրականացնել ցանկացած գործողություն դրանց առնչությամբ, անգամ եթե դրանք գտնվում են ընդհանուր սեփականության ներքո: Իր կողմից կեղծ տեղեկություններ, ոչ արժանահավատ հավաստումներ, ներկայացնելու դեպքում **Հաճախորդն** անձամբ ստանձնում է հնարավոր բոլոր իրավական հետևանքների պատասխանատվությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

7. Տվյալների մշակման և գաղտնիության վերաբերյալ պայմաններ

- 7.1. Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը՝ **Ընկերությունը** և/կամ **Բանկը, Հարթակի** միջոցով **Օտաայությունների** մատուցման շրջանակներում կարող են հավաքագրել, պահպանել **Հաճախորդի** կամ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք/եր/ի վերաբերյալ որոշակի տվյալներ և տեղեկատվություն, ինչպես նաև դրանց նկատմամբ իրականացնել ցանկացած այլ գործողություն, որն ուղղված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված տվյալների մշակմանը: **Հաճախորդի** հետ իրավահարաբերություններ ձևավորելու, **Հաճախորդին** նույնականացնելու, **Օտաայությունների** տրամադրման, դրա շրջանակներում փաստաթղթեր կազմելու, առաջարկներ ներկայացնելու, **Հարթակի** աշխատանքի կատարելագործման, **Հարթակի** օգտագործման վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն հավաքագրելու նպատակով **Հաճախորդի** վերաբերյալ մշակման ենթակա տեղեկատվությունը առնվազն ներառում է.

- 7.1.1. **Հաճախորդի** անձնական և կոնտակտային տվյալները, որոնք տրամադրում է **Հաճախորդը՝ Հարթակում Օգտատեր** գրանցելիս (օրինակ՝ անուն, ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար, մուտքանուն):
- 7.1.2. **Հարթակում Հաճախորդի** կողմից ներկայացված հայտերի հետ կապված տեղեկատվություն (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, **Հաճախորդի** կողմից **Հարթակում** հրապարակվող **Հաճախորդի** անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն):
- 7.1.3. «Անշարժ գույքերի կառավարման հարթակում նույնականացման և դրա շրջանակներում ծառայությունների մատուցման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ստացվող տեղեկատվություն»² փաստաթղթով սահմանվող, ինչպես նաև, կիրառելիության դեպքում, **Հաճախորդի** կողմից առանձին տրվող համաձայնությունների հիման վրա համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ստացվող տեղեկատվություն (օրինակ՝ **Հաճախորդի** վարկային պատմության, աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն):
- 7.1.4. **Հաճախորդների Օգտատերերի** վերաբերյալ ինքնաշխատ կերպով հավաքագրվող քանակական տեղեկատվություն, որի չի ներառում որևէ անձնական տվյալ: Այդպիսի տեղեկատվություն է ներառյալ, սակայն չսահմանափակվելով, **Օգտատերերի** սարքերի, օպերացիոն համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը, **Հարթակի** էջերը, որոնք **Օգտատերերը** այցելում են, աշխարհագրական տեղեկատվություն, **Օգտատիրոջ** կողմից **Հարթակում** կատարվող գործողությունները՝ հետագա այցելությունների նպատակով **Օգտատերերի** նախընտրությունները հասկանալու և հիշելու համար և այլն:

² «Անշարժ գույքերի կառավարման հարթակում նույնականացման և դրա շրջանակներում ծառայությունների մատուցման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից ստացվող տեղեկատվություն» (11RBD LI 72-06-07), ընդունվել է Բանկի Տնօրինության 13.11.2025թ. թիվ 01/181/25 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

- 7.2. **Ընկերությունը** և/կամ **Բանկը Հաճախորդի** տվյալները մշակում են այնպիսի ծավալով և տվյալների մշակման այնպիսի եղանակներով, որոնք անհրաժեշտ են տվյալների մշակման տվյալ նպատակի համար և անհամատեղելի չեն դրա հետ՝ պահպանելով նաև համաչափության սկզբունքի շրջանակներում այլ պահանջները:
- 7.3. **Հաճախորդը** գիտակցում է և ընդունում է, որ **Ընկերությունը** և/կամ **Բանկը** իրավասու են սույն գլխով սահմանված՝ **Հաճախորդի** անձնական տվյալները փոխանցել իրենց հետ համագործակցող **Երրորդ կողմին՝ Պայմաններով սահմանված Ծառայություններ/ի** մատուցման/նպատակների իրականացման շրջանակներում:
- 7.4. **Հաճախորդի** կողմից **Պայմանագրի** կնքման միջոցով կամ կիրառելիության դեպքում առանձին հայտով տրամադրված՝ իր տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունները գործում են տրամադրման պահից՝ **Կողմերի** միջև **Պայմանագրի** ներքո իրավահարաբերության ամբողջ ժամանակահատվածում, եթե այլ բան սահմանված չէ **Պայմանագրով** կամ ՀՀ օրենսդրությամբ:
- 7.5. **Հաճախորդը** պարտավոր է **Ընկերությանը** և **Բանկին** տրամադրել **Ընկերության** և **Բանկի** կողմից պահանջվող (այդ թվում՝ փաստաթղթավորված)՝ **Հաճախորդի** տվյալները և այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրության, **Բանկի** ներքին իրավական ակտերի համաձայն **Հաճախորդի** պատշաճ ուսումնասիրության և նույնականացման համար, ինչպես նաև **Պայմանագրով** սահմանված այլ նպատակների իրականացման համար: **Հաճախորդը** պարտավոր է հատուցել ՀՀ օրենսդրության և **Պայմանագրի** համաձայն **Ընկերությանը** և **Բանկին** պարտադիր տեղեկացման ենթակա տվյալները չներկայացնելու, մասամբ ներկայացնելու, թաքցնելու, խեղաթյուրելու, չթարմացնելու հետևանքով **Ընկերության** և/կամ **Բանկի** կրած վնասներն ամբողջ ծավալով:
- 7.6. **Հաճախորդը** պարտավոր է իր տվյալներում և՛ **Ընկերությանը**, և՛ **Բանկին** ներկայացված փաստաթղթերում ցանկացած փոփոխության մասին անհապաղ տեղեկացնել **Ընկերությանը** և **Բանկին**՝ համապատասխան հայտի և փաստաթղթերի միջոցով: Նման փոփոխությունների վերաբերյալ **Ընկերությանը** և **Բանկին** տեղեկություններ չտրամադրվելու դեպքում **Ընկերությունը** և **Բանկը** պատասխանատվություն չեն կրում **Ընկերության** և **Բանկի** մոտ առկա՝ **Հաճախորդի** տվյալների կամ փաստաթղթերի հիման վրա **Հաճախորդին Ծառայությունների** տրամադրման, **Ծառայությունների** վերաբերյալ տեղեկատվությունը **Երրորդ կողմին** հասանելի դառնալու, **Հաճախորդին** ուղղված ծանուցումները **Հաճախորդի** կողմից չստանալու կամ **Երրորդ կողմին** հասանելի դառնալու հետևանքների համար: Բացի այդ, սույն կետում նշված պատճառներով **Ընկերության** կամ **Բանկի** ծանուցումները **Հաճախորդի** կողմից չստանալը չի հանգեցնում **Հաճախորդի՝ Պայմանագրով** սահմանված պարտավորությունների դադարեցման:
- 7.7. **Հաճախորդի** պարտավորվում է պատշաճ պահպանել և **Երրորդ կողմին** հասանելի չդարձնել իր այն տվյալները, անձնական հաղորդակցման միջոցները, **Հարթակից** օգտվելու իր սարքերի, ծրագրային ապահովման և մուտքային, նույնականացման տվյալները, որոնց օգտագործմամբ **Հաճախորդը** հաղորդակցվում է **Ընկերության** և/կամ **Բանկի** հետ, փոխանակում է հաղորդագրություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ ստանում ծանուցումներ: **Հաճախորդը** կրում է սույն կետում նշված տվյալները և միջոցները **Երրորդ կողմին** հասանելի դառնալու, դրանց կիրառմամբ՝ **Ծառայությունների** մատուցման կամ դրանց մատուցումը մերժվելու, ինչպես նաև **Ընկերության** և/կամ **Բանկի** կողմից ուղարկված ծանուցումները չստանալու, չկարդալու և/կամ **Երրորդ կողմին** հասանելի դառնալու հետ կապված բոլոր հետևանքների ռիսկը, ինչպես նաև պարտավորվում է ըստ պահանջի հատուցել դրա հետևանքով **Ընկերությանը** և/կամ **Բանկին** պատճառված վնասները:
- 7.8. **Հաճախորդը** պարտավոր է **Հարթակից** օգտվելու իր սարքերի, ծրագրային ապահովման և մուտքային, նույնականացման տվյալների կորստի, **Երրորդ կողմին** հայտնի դառնալու կամ նման վտանգի առկայության, **Երրորդ կողմի** կողմից **Հաճախորդի Օգտատիրոջ** էջ մուտք գործելու /այն օգտագործելու կամ

նման փորձի մասին իմանալու, կասկած ունենալու դեպքերում անհապաղ միջոցներ ձեռնարկել **Հարթակի** իր **Օգտատիրոջ** էջի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ այդ մասին անհապաղ հայտնել **Ընկերությանը** կամ **Բանկին**:

- 7.9. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի առկայության դեպքում **Հաճախորդի** տվյալների ուղղման, ոչնչացման, մշակման դադարեցման (տրված համաձայնություն(ներ)ը հետ կանչելու) վերաբերյալ **Հաճախորդի** հայտը դիտարկվում և ընթացք է տրվում ՀՀ օրենսդրությամբ, **Ընկերության** ներքին գործընթացներով և **Բանկի** ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում՝ **Ընկերության** կամ **Բանկի** կողմից, կախված այն հանգամանքից, թե ում կողմից են մշակվել **Հաճախորդի** տվյալները: **Բանկը** պատասխանատվություն չի կրում **Ընկերության** կողմից մշակվող **Հաճախորդի** տվյալների հետ կապված **Հաճախորդի** հայտի դիտարկման, ինչպես նաև հայտից բխող պահանջների կատարման/չկատարման հետևանքների և օրենսդրական պահանջների խախտման համար: **Հաճախորդի** տվյալների մշակման դադարեցումը կարող է հանգեցնել **Ծառայությունների** մատուցման դադարեցման կամ սահմանափակման: **Հաճախորդի** կողմից համաձայնություն(ներ)ի հետ կանչումը չի հանգեցնում նախքան համաձայնություն(ներ)ի հետկանչումը նշված համաձայնություն(ներ)ի ներքո ծագած իրավական հետևանքների չեղարկման:
- 7.10. **Հաճախորդն** իր տվյալները և դրանց մշակման վերաբերյալ համաձայնությունները տրամադրում է իր ազատ կամահայտնությամբ և իր շահերից ելնելով: Նշված համաձայնությունները **Հաճախորդի** կողմից տրված են համարվում **Պայմանագրի** կնքման միջոցով կամ ըստ կիրառելիության՝ առանձին հայտով:
- 7.11. **Ընկերությունը** և **Բանկը** պարտավորվում են ՀՀ օրենսդրության համաձայն գաղտնի պահել **Հաճախորդի** տվյալները, իսկ **Հաճախորդն** իր հերթին պարտավորվում է գաղտնի պահել **Կողմերի** իրավահարաբերությունների ընթացքում **Ընկերության** և **Բանկի** վերաբերյալ ստացված ոչ հրապարակային տեղեկատվությունը: Ընդ որում, **Ընկերությունից** և **Բանկից** ստացված **Ընկերության** և **Բանկի** վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն ոչ հրապարակային է, եթե դրանում հակառակի վերաբերյալ նշում առկա չէ: Սույն պայմանը գործում է ինչպես **Պայմանագրի** գործողության ամբողջ ընթացքում, այնպես էլ **Պայմանագրի** դադարեցումից հետո: Ընդ որում, նշված սահմանափակումը չի վերաբերում այն դեպքերին, երբ ա) **Կողմը** տեղեկատվությունը բացահայտում է ՀՀ օրենսդրության պահանջներն ապահովելու, **Պայմանագրով** սահմանված այլ դեպքերում և նպատակով, բ) տեղեկատվությունը որևէ **Երրորդ կողմի** հասանելի է դառնում՝ **Կողմերի** համաձայնությամբ:
- 7.12. **Հարթակում Օգտատեր** գրանցելով և **Պայմաններին** համաձայնություն տալով՝ **Հաճախորդը** համաձայնում է, որ **Ընկերությունը** և/կամ **Բանկը** իրավասու են իր էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել մարքեթինգային բնույթի առաջարկներ, **Հարթակի** տեխնիկաձրագրային նոր լուծումների և/կամ գործառնությունների վերաբերյալ ծանուցումներ:
- 7.13. **Հաճախորդը** համաձայն է, որ **Բանկը** և/կամ **Ընկերությունն** իրավունք ունեն իրենց՝ **Պայմաններից** բխող իրավունքներն ու պարտականությունները փոխանցել **Երրորդ կողմի**՝ այդ մասին նախապես ծանուցելով **Հաճախորդին**: Նշված դեպքում, տվյալ **Երրորդ կողմն** ամբողջ ծավալով ստանձնում է **Պայմանների** հիման վրա առաջացած իրավահարաբերությունից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 7.14. **Հաճախորդի** տվյալները հասանելի են դարձվում **Երրորդ կողմին** **Պայմաններով** սահմանված նպատակներին և դեպքերին համապատասխան: